



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԸ



այր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի մայիսի համարում տպագրվել է պաշտոնական հաղորդագրություն այն մասին,

որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի վերակառուցման առթիվ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ, հարտապետի Սահմանների գլխավորությամբ, պեղումներ կատարեց Ս. Սեղանի բեմի տակ, և ապրիլի 8-ին, տեղում հրավիրված հնագետների և հարտապետների հանձնաժողովը, բնեկով պեղումների արդյունքները, հաստատեց, որ հայտնաբերվել են՝

1. Ե դարում Վահան Մամիկոնյանի կողմից կառուցված Ավագ Սեղանի խարխուլները, բեմը և վեմ ֆարերը, որոնք պահպանված են անաղարտ վիճակում:

2. Ե դարի բեմի որոշ սրբատաշ ֆարերի վրա հնագույն որմանկարների մնացորդներ:

3. Ե դարի Ս. Սեղանի կառուցվածքի ներսում՝ առավել հնագույն խորանի պատեր, որոնք կարող են լինել կա՛մ Ս. Կրիգոր Լուսավորչի օրով 301 թվականին կառուցված խորանի, և կա՛մ թեևս առավել հնագույն շրջանի մի սրբավայրի կրակարանի մնացորդներ:

Պեղումների ժամանակ հայտնաբերվել է նաև ուրարտական ժամանակաշրջանի (2-3 դար ք. ա.) սրբատաշ բազալտից հղկված մի մեծ կոթող:

Մայր Տաճարի Սեղանի տակ կատարված պեղումների արդյունքները ՎԱՅՈՒՄ ԵՆ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԻՅ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ ԱՌԱՋ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ, ԴԵՌԵՎՍ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՅ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿՆՆՏՐՈՆԻ ԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Հի՛ն, շատ հի՛ն է դարերի ընդերքից բարձրացող Ս. Էջմիածնի սրբավայրի և Տաճարի պատմությունը: Տասնյոթ դարերի հնություն ունեցող Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որպես պատմական հուշակապ կոթող, Քրիստոնեական Ընդհանուր Եկեղեցու առաջին հուշարձաններից մեկն է ողջ աշխարհում, և իր պատկանելի հնությամբ, հրաշապատում սկզբնավորությամբ, հայկական դասական հարտապետությամբ ու հայ ժողովրդի կյանքում իր կատարած ազդեցությունը՝ հեղեղեցական և մշակութային պատմական դերով, ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ է ՀԱՅ ՀԱՎԱՅԱՑՑԱԿ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՄԵՆԱՆՎԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳՎԱՅԻՆ ՈՒՆՏԱՎԱՅՐԸ: Ս. Էջմիածնի Մայր Տաճարը դարերի ընթացքում ենթարկվել է բնական և ֆաղափական փոքրիկների պատճառած ավերածություններին, սակայն, նորից ու նորից հայ ժողովրդի հավատն ու բարեպաշտությունը կյանքի են կոչել այն, և Ս. Էջմիածինը, միշտ, անցյալի մշտնջեն, դարերի մաշումից, ժամանակների հոգմահարումից վերանորոգվել է ու վերակենդանացել:

Ահա այսօր ևս նա՛ Ս. Էջմիածինը, բազմել է Արարատյան դաշտի կենտրոնում, սպիտակափառ Մասիսների նայվածքի տակ, ու կմնա կանգուն, ֆանի այդ պատմական դաշտավայրում կապրի հայ ժողովուրդը:

Մեր Հայրենի հողը պատմական հուշարձաններ, խաչքարեր մի սուրբ աշխարհ է, որտեղ յուրաքանչյուր կտոր հողի, քարի, ծառի վրա, հավերժացել է հայ ժողովրդի մտքի, հոգու, սրտի, ձեռքի շնորհների գեղեցկությունն ու փառքությունը: Ս. էջմիածինը Մայր Տաճարը պատմական և սուրբ այդ կոթողներից, նյութական գոհարներից հնագույնն է:

Ըստ Ագաթանգեղոսի վկայության, Ս. էջմիածնի Մայր Տաճարի կառուցումը տեղի է ունեցել Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն, Տրդատ Գ բագավորի օրով, 301—303 թվականներին. «Հրամայեցաւ նմա (Լուսավորչի) ի տեսլացոյց հրեշտակէն, եթէ շինեսցիր զՏաճար անուանն Աստուծոյ որ ցուցաւ ի տեղուդ՝ ուր սինն հրեղէն ունէր զոսկի խաւիսիսն»:

Մայր Տաճարի կառուցումից ութսուն տարի հետո, Գ դարի 80-ական թվականներին, տեղի է ունեցել Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի առաջին վերանորոգումը, Շապուհ Բ-ի Հայաստանում կատարած ավերածություններից հետո, ինչպես վկայում է Փավստոս Բյուզանդը:

480-ական թվականներին, Մայր Տաճարի առաջին վերանորոգումից 100 տարի հետո, Վահան Մամիկոնյանը «եկեալ հասանէր ի Վաղարշապատ ֆաղաֆ... կատարէր զաւորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցուդն Կաթողիկէի... զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շինդութեամբ» (Ղազար Փարպեցի):

1957—1959 թվականներին, Մայր Տաճարի ներսում կատարված պեղումները ցույց տվեցին, որ Մայր Տաճարի այժմյան կառուցվածքի տակ գոյություն ունեն, Տաճարի ներկա հորինվածքից տարբերվող, մեկ այլ, առավել հնագույն հորինվածք ունեցող շենքի մնացորդներ, խաւիսիներ:

«Ճարտարապետական-շինարարական այդ նյութերը լիովին հաստատում են էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ ինչպես Ագաթանգեղոսի, այնպես էլ Ղազար Փարպեցու հաղորդած վկայությունների խկությունը» և «որոշակի լույս են սփռում Ս. էջմիածնի Մայր Տաճարի հնության, նրա նախնական ձևի և կրած հետագա ձևափոխությունների լուսաբանման վրա» և «մեծագույն նշանակություն ունեն Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) քրիստոնեական վաղ շրջանի ճարտարապետական-շինարարական արվեստի մի շարք արմատական հարցերի նշմարացի ըմբռնման համար» (Ալ. Սահիկյան, «Նոր նյութեր էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ», «էջմիածին», 1956 թ., № 12, էջ 67), ինչպես

նաև Ս. էջմիածնի սրբավայրի հնության, որպես երեք հազարամյակ հնություն ունեցող աղոթավայրի և որպես մշակութային-կրոնական կենտրոնի վրա: Եվ անհա միլիոն անգամ երեք հազար տարիներ, Արարատյան դաշտում, Հայ հողի սրտի վրա, հայ ժողովրդի սուրբ ձեռքերով, փար առ փար, կամար առ կամար բարձրացել է Ս. էջմիածինը, նախ որպես աղոթքի տուն, սրբավայր, հետո որպես հայության, և ապա որպես «ՏԱՆԱՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՏՈՒՆ աղօթից խրեդուածոց ամենայն հաւատացելոց և Արոս Բանանայութեան» (Ագաթանգեղոս), քրիստոնեյա հայության համար:

Ս. էջմիածինը եղել է հայ հոգու, մտքի, սրտի հավերժական խանձարուր: Ս. էջմիածինը հայ հոգու քոչվի է, փառեղեն աղոթք ու մրմունջ հայ հավատավոր հոգու՝ դեպի երկինք, դեպի Աստված իր խոյանքի մեջ արձանագամ:

Ո՛չ մի բանով պայմանավոր չի եղել հայ ժողովրդի սերն ու հավատարմությունը դեպի Ս. էջմիածինը: Եվ երբեք պատահականություն էլ չէ այն, որ հայ ժողովուրդը, ազգային հպարտության ամենամաքուր զգացմունքներով, աչքի լույսի պես պանել ու պանդանել է Ս. էջմիածինը որպես ճշխարհ, որպես նվիրական մասունք, որպես աղբյուր լույսի և հույսի, որպես հավատի ամրոց և հոգեկան կամուրջ, որպես տեսիլք: Հայությունը ամբողջ, ազգովին գլուխ է խոնարհել այդ միակ, համագային հավիտենական ու հավերժական սուրբ հաստատության վեհության առաջ: Դարեր շարունակ Ս. էջմիածնի լույսը իր սուրբ խորհրդով հառաքայթել է հայության սրտում, հայ ժողովուրդը նրանով է ներշնչվել և նրանից է ստացել իր հոգևոր, ազգային սնունդը:

«Սուրբ և ստույգաշին, քրիստոնական և լուսանկար ամենից Հայոց Արոս էջմիածին... մայր ամենայն եկեղեցեաց,— գրում է Սիմեոն Երևանցին, և ապա հարցնում.

«— Զի՞նչ ելիք տեսանել յերկիրս յայս, և կամ զի՞նչ կամիք իմանալ զմայրս մեր Ս. էջմիածին. տո՛ւն իմն մարդկան ձեռագործ:

— Ո՛չ:

— Եւ կամ հասարակ եկեղեցի՞ իմն ի մարդկային ճարտարութենէ և ի յերկրային նիւթոյ կազմեցեալ:

— Ո՛չ:

— Եւ կամ զի՞նչ ելիք տեսանել և իմանալ ի դաշտս Վաղարշապատու. զգեղեցիկ իմն շինուած, և կամ զնկարակերտ իմն ազնիւ ըստ մարմնականի և ըստ երևելոյ տեսութեան միայն:

Այլ զի՞նչ ելիք տեսանել և իմանալ զհոգևոր և զաստուածային իմն կերտուած, և

կամ զխորհրդաւոր երկին իմն ի յերկրի երեւալ:

— Այո, ասեմ ձեզ, առաւել ևս քան զերկին...:

Էջմիածին՝ տաճար փոքրագոյն՝ քան զերկինս մեծագոյն:

Էջմիածին՝ զարդ եկեղեցեաց, պարծանք Հայաստանեայց, արեգակն պայծառագոյն և լուսատուրող տանս Արամեան:

Էջմիածին՝ ծնող հոգևոր, մայր շնորհասուն, համալսարան իմաստութեան, վարժարան զիտեոց և նիւթ քաղաքացեաց:

Վեհափառ Հայրապետը, որն անհուն սիրով սիրում է Ս. Էջմիածինը, պաշտում է Ս. Էջմիածնի «Բարերոյ խորհուրդը», Ս. Էջմիածնին նվիրված Իր հետեյալ սրտագին խոսքերի մեջ խտացել է ողջ հայ ժողովրդի զգացմունքն ու սերը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը.

«Բարերը, որ եկեր են ու անցեր, ավելի ու ավելի ամրացուցեր են հիմքերը այս Ս. Տաճարին: Ինչքան նշմարտորեն համաձայն է պատմական իրողության՝ մեծ քանակութեամբ զգացումը՝

«Բարեր եկան, դարեր անցան,

Քո հիմն անշարժ ու անսասան,
Էջմիածին՝ն,
Էջմիածին՝ն»:

Ս. Էջմիածնի Մայր եկեղեցին իրավ վկան է մեր բազմադարյան պատմության, մեր սուրբ հավատքի գործության, մեր ժողովրդի շինարար հանճարին և ապրելու աննկուն կամքին:

Այս ֆաբերը մեր սուրբ հավատքի վեմը կհանդիսանան և խարիսխը մեր ժողովուրդի կյանքին: Այս ֆաբերով հյուսված է մեր պատմությունը, այս ֆաբերու վրա հաստատված է մեր Ազգը: Լուս քվացող այս ֆաբերը կենդանի են և մեզի կխոսին դարե-

րու խորքեն. դուք բոլորդ ականջ դրեք անոց քաղ լուսւթյան:

Նվ անա այս հազարամյա սրբատաշ ֆաբերու վրա կանգնած ենք մենք՝ այսօրվաններս: Մենք ենք տերը և պահպանը այս ֆաբերուն: Կանգնած անոց վրա, մենք պիտի շարժինք և պիտի շտկարանանք երբեք, այլ աներկյալ ու համարձակ, սրբորայամը պիտի պահենք, պահպանենք մեզի հանձնված այս սրբազան ավանդը, ուխտելով մեր կյանքի գործերով հավատարմ մնալ անոր պատգամին: Մեր հավատքին, մեր մտորումներուն, մեր հույզերուն, մեր երազներուն, մեր կյանքին ստուգություն են այս ֆաբերը: Անոց վրա պիտի հիմնենք ու պիտի կառուցենք մեր եօր կյանքը ու պիտի կերտենք մեր պայծառ ապագան:

Էջմիածինը սակայն անցյալ չէ միայն. ան է նաև ներկա և մեր ապագան: Կենդանի է ան ու մշտանորոգ: Ս. Էջմիածինը միշտ կբաշխվի ու չի նվազիր, ինչքան բաշխվի, այնքան կշատնա, ինչքան լույս սփռե՝ այնքան կշողա: Դարերը կուգան, դարերը կանցնին, ան կբարձրանա, կլուսավորե ու կներշնչե միշտ, կյանք տալով կապրի...»:

Այսօր էլ կանգուն է Ս. Էջմիածինը ու կմնա հավիտյան, «որպես միաձուլվ վեմը հայության հավատքին, մնացել է ու կմնա անսասան, Արարտի պես, ու կպայծառանա հավետ՝ ծոցին մեջ մեր վերածաղկող Հայրենիքի, հովանիին տակ հայ հարազատ պետության ու մեծաշնորհ շահներովը մեր առաքելական հայրապետներուն», որոնց արժանավոր շառավիղն է Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը, որի կյանքի նպատակն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառացումը:

Հավիտենական, հավերժական է Ս. Էջմիածինը, ինչպես հայ ժողովուրդն ու Հայրենի սրբազան հողը:

